

ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏ ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՒ ՕՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԱՄՐԱԳՐՈՂ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ՄԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՅ

Երեքշաբթի, 1 Մարտ 2022-ին, Սուրիոյ Նախագահութեան պաշտօնական կայքը հաղորդեց, որ Սուրիոյ եւ Բայաստանի միջեւ օդային ծառայութեան ոլորտին մէջ գործակցութիւնն ու ապրանքներու փոխանակումը գարգացնելու նպատակով, յատկապէս Սուրիոյ դէմ Եւրոպական Միութեան պարտադրած տնտեսական պատժամիջոցներուն լոյսին տակ, Սուրիոյ Նախագահ Պաշար ալ Ասատ հրապարակեց 2022-ի «3» թուակիր հրամանագիրը, որուն համաձայն Սուրիոյ եւ Բայաստանի կառավարութիւններուն միջեւ 14 Մայիս 2021-ին ստորագրուած օդային ծառայութեան համաձայնութիւնը վաւերացուեցաւ:



ՀՅՂ 34-ՐԴ ԸՆԴՀ ԺՈՂՎԻ ՄԱՍՆԱԿԻՅՆԵՐԸ ԵՌԱԲՈՒՐ ԴԱՆԹԻՈՆ ԱՅՅԵՆԵՅԻՆ



Երկուշաբթի, 28 Փետրուարին, ՀՅՂ 34-րդ Ընդ. Ժողովի բացման նախօրեակին, Դաշնակցութեան աշխարհասփիւռ կառոյցի ներկայացուցիչները, ՀՅՂ Բիւրոյի եւ Բայաստանի Գերագոյն Մարմինի ղնկերներուն առաջնորդութեամբ, այցելեցին Երազլուր պանթոն եւ ծաղիկներ տեղադրեցին հայոց ազատամարտի նահատակներու շիրմներուն վրայ:

ՍՕ ԽԱԳ-ԱԶԳ. ԴԱՏՊԱՐԱՆԻ ՓՈՔՐԻԿՆԵՐԸ ՀԻՒՐԵՆԿԱՆՈՒԹԵՅԱՆ ՀՀ ՀԱՆԴԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԽՈՒՄԲԻ ԿԵԴՐՈՆԵՆ ՆԵՐՍ

Արդէն իսկ մշակուած յարաբերութիւնները ամրապնդելու նպատակով, ՀՀ Մարդասիրական առաքելութեան գլխուորական բանակին ութերորդ խմբակը նախաձեռնեց Ազգ. Պատասպարանի փոքրիկներուն հրաւերի մը, որ տե-



ղի ունեցաւ Երեքշաբթի, 1 Մարտ 2022-ին, մարդասիրական առաքելութեան խումբի կեդրոնէն ներս: Փոքրիկները ջերմապէս դիմաւորուեցան մտերմիկ մթնոլորտի մը մէջ, ժպիտներով, երգերով եւ ծափահարութեամբ: Անոնք վայելեցին նաեւ համեղ հիւրասիրութիւնը: Այցելութեան նպատակն էր փոքրիկներուն մօտ սերմանել հայոց բանակին հանդէպ սեր եւ հպարտութիւն, զիրենք ծանօթացնել բանակի առաքելութեան եւ սերտ պահել Բայաստան-Արցախ-Սփիւռք կապերը: Փոքրիկներուն կ'ընկերակցէին Պատասպարանի Յանձնախումբը եւ ՍՕԽ-ի Շրջ. Վարչութեան ատենապետ Սիրան Ամպարճեանը:

ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱՒ ՀՅՂ 34-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՎԻ ԴԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ

Երկուշաբթի, 28 Փետրուարին Երեւանի «Անի Փլագա» պանդոկի «Անի» սրահին մէջ տեղի ունեցաւ Բայ Յեղափոխական Դաշնակցութեան 34-րդ Ընդհանուր ժողովի բացման պաշտօնական արարողութիւնը, որուն



կը մասնակցէին աշխարհի շուրջ 28 երկիրներէ աւելի քան 100 ներկայացուցիչներ եւ հրաւիրեալներ:

Բացումը տեղի ունեցաւ Բայաստանի Զանապետութեան, Արցախի Զանապետութեան եւ ՀՅՂ քայլերգներով:

Տերունական աղօթք կարդաց Գերաշնորհ Տէր Նաթան Արքեպիսկոպոս Յովհաննիսեան եւ փոխանցեց Ամենայն Բայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի ողջոյններն ու օրհնութիւնը:



Ելոյթներով հանդէս եկան՝ ՀՅՂ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան եւ ՀՅՂ ԳՄ ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեան:

Իր խօսքի աւարտին ՀՅՂ Բիւրոյի ներկայացուցիչը շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն եւ այն համակիրներուն, բարերարներուն, որոնք երկար տարիներ ՀՅ Դաշնակցութեան կողքին եղած են:

Բայ Յեղափոխական Դաշնակցութեան 34-րդ Ընդհանուր ժողովի բացման պաշտօնական արարողութեան նիստը աւարտեցաւ:



Նշենք, որ Ընդհանուր ժողովը, որ ՀՅՂ համազգային կառոյցի բարձրագոյն ժողովն է, կը գումարուի 4 տարին անգամ մը: 34-րդ Ընդհանուր ժողովը առաջինն է Արցախեան 44-օրեայ պատերազմէն ետք, կը տեւէ մինչեւ 8 Մարտ:

Խմբագրական

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՈՒՐԻԱ ԹՈՒՉՔՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԵՆ ԱՆԴԻՆ

Եթե նկատի ունենանք վերջին տարիներու աշխարհաքաղաքական զարգացումները, Սուրիոյ պատերազմը, Արցախի դեմ պատերազմը, շաբաթներ առաջ բռնկած Ուքրանիոյ պատերազմն ու անոր արդիւնքները, յստակ կը դառնայ տարածաշրջանին մէջ ազդեցութիւն բանեցնելու համար նկրտող պետութիւններու հեռանկարները, եւ կարգ մը երկիրներու գործակցութեան արդիւնաւետութիւնը:

Միջին Արեւելքի մէջ Ռուսիոյ ներկայութիւնը զգալի դառնալուն հետ, ռուս-սուրիական յարաբերութիւնները այնքան սերտացան, որ Ուքրանիոյ պատերազմի զարգացումներուն առիթով Սուրիա կողմնակից դարձաւ Ռուսիոյ կեցուածքին՝ յստակօրէն ճանչնալով նաեւ անկախութիւնը Տոնցքի եւ Լուկանսքի հանրապետութիւններուն:

Ռուսիան նաեւ Սուրիոյ մէջ թուրքիոյ դերակատարութիւնը հակակշռողի դերին մէջ է, այնպէս ինչպէս Արցախի մէջ, նաեւ Սիւնիքի, ատրպէյճանաթրքական վտանգին դեմ պատուար կը հանդիսանայ առայժմ:

Հայաստան չի կրնար ճանչնալ վերոնշեալ հանրապետութիւններու անկախութիւնը, այնքան ատեն որ չէ ճանչցուած Արցախի անկախութիւնը իր եւ հետեւաբար այլոց կողմէ:

Կը ստեղծուի՞ այդ առիթը յառաջիկայ աշխարհաքաղաքական զարգացումներուն լոյսին տակ, դժուար է կռահել, սակայն պատրաստ պէտք է ըլլալ այդ տարբերակին, որովհետեւ թուրքիան կրնայ որեւէ ատեն կտրական փոփոխութիւն կատարել Ռուսիոյ հետ յարաբերութիւններու իր քաղաքականութեան մէջ, նոյնիսկ Սիւնիքի վրայ յարձակման փորձ կատարել:

Սուրիոյ եւ Հայաստանի կը սպառնայ թրջական նոյնաման վտանգ՝ տարածքներու բռնագրաւումէն մինչեւ երկու երկիրներու մէջ թուրքիոյ ազդեցութեան աճի հեռանկար՝ Սուրիոյ մէջ ընդդիմադիր զինեալներու օգտագործումով, Հայաստանի մէջ իշխանութիւններու Հայաստան-թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման թեզով:

Ուստի Սուրիա-Հայաստան յարաբերութիւններու զարգացումը, յատկապէս ներկայ աշխարհաքաղաքական զարգացումներու լոյսին տակ, կարելիութիւն կրնայ ստեղծել միասնական ելքեր որոնելու նախատեսուող տնտեսական թէ ապահովական դժուարութիւններէն:

Եթե Սուրիոյ դեմ արեւմուտքի սահմանած պատիժներու ազդեցութեան յաղթահարման կրնայ նպաստել Հայաստանը՝ դուռ բանալով սուրիական արտադրութիւններուն Հայաստանի ճամբով դէպի արեւմուտք եւ Կովկաս հասանելիութեան դիմաց, Հայաստանի համար եւս Սուրիան կրնայ տնտեսական ուղի մը զարգացնել դէպի Միջին Արեւելք, ինչպէս նաեւ ապահովական իմաստով գործակցութեան եզրեր բանալ, յատկապէս եթէ նկատի ունենանք ռուսական ներկայութիւնը միջերկրականի մէջ եւ այդ ճամբով ապահովական խարիսխներու ամրապնդումը այնտեղ, միեւնոյն ժամանակ Ռուսիոյ զինուորական ներկայութիւնը Հայաստանի եւ Արցախի սահմանին ու այդ երկուքին միջեւ կապ մը տեսնենք ապահովական իրավիճակներու վատթարացման պարագային:

Սուրիոյ նախագահը օրերս ստորագրեց Հայաստան - Սուրիա թռիչքներու համաձայնութիւնը հաստատող հրամանագիր մը: Այս քայլը, թռիչքներու աշխուժացումէն անդին, կը յուշէ երկու երկիրներուն տարբեր դժուարութիւններու յաղթահարման մէջ հասարակ յայտարարներ որոնելու կարելիութիւնները:

«Գ.»

ԳՈՅԺ

Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեան, Ազգային Երեսփոխանական Ժողովը, Ազգային Վարչութիւնը եւ Կրօնական Ժողովը սրտի խոր կսկիծով կը գուժեն վախճանումը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբան հայր, Բերիոյ Հայոց Թեմի Նախկին Առաջնորդի օգնական, Կրօնական Ժողովի Նախկին անդամ, թեմի Կիրակնօրեայ դպրոցներու խորհուրդի Նախկին ատենապետ, Բերիոյ Հայոց Թեմի «Ծառայութեան» շքանշանակիր

Տ. ՎԱՅԱՆ Ծ. ՎՐԴ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ,

որ պատահեցաւ Ծաբաթ, 26 Փետրուար 2022-ին, Լիբանանի մէջ: Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Կաթողիկոսութեան միաբան հայրերուն, վախճանեալ հայր սուրբի ընտանիքին եւ հարազատներուն:

Այս տխուր առիթով, Կիրակի, 27 Փետրուար 2022-ին, Բերիոյ Հայոց Թեմի բոլոր եկեղեցիներէն ներս, յետ Սուրբ եւ Ամմահ Պատարագին, վախճանեալ հայր սուրբին հոգւոյն հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ: Առաջնորդ սրբազան հայրը հանդիսապետեց Հալէպի Սրբ. Քառասնից Մանկաց Մայր եկեղեցւոյ հոգեհանգստեան արարողութեան:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:
Դիան Ազգ. Առաջնորդարանի

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԼՈՒՍԱՀՈԳԻ

Տ. ՎԱՀԱՆ Ծ. ՎՐԴ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Հոգեւոյն Տ. Վահան Ծ. Վրդ. Պերպերեան, աւագանի անունով Յովսէփ, ծնած է Տերիք (Սուրիա, Ճազիրէ) 1945 թուականին: Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն Ազգային Ազատութիւն Վարժարանին մէջ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք ընդունուած է 1960-ին:



Սարկաւազ ձեռնադրուած է 1964-ին, ապա 4 Յունիս 1967-ին ձեռնադրուած է օծուած է կուսակրօն քահանայ՝ վերակոչուելով Տ. ՎԱՀԱՆ ԱԲԵՂԱՅ, իսկ 14 Փետրուար 1971-ին Վարդապետական գաւազանի իշխանութիւն ստացած է՝ ձեռամբ Դպրեվանքի տեսուչ Տ. Գարեգին Եպս. Սարգիսեանի: Հոգեւոյն հայր սուրբը 13 Մայիս 1983-ին Ծայրագոյն Վարդապետութեան իշխանութիւն ստացած է՝ Ս. Աթոռոյս գահակալ Գարեգին Բ. Կաթողիկոսի ձեռամբ:

Հայր Վահան Մայրավանքէն ներս գանազան վանական պաշտօններ ստանձնած է, ինչպէս՝ ուսուցիչ Դպրեվանքի եւ գաւազանակիր:

1973 Սեպտեմբերին հովուական առաքելութեամբ մեկնած է Զարաքաս (Վենեզուելա), ուր 25 տարի լծուած է իրեն վստահուած հոգեւոր ծառայութեան:

1998-2000 թուականներուն հովուական ծառայութիւնը շարունակած է Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմէն ներս:

2000-2006 նշանակուած է Վանքուվըրի (Քանատա) Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ:

ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին տնօրինութեամբ եւ օրհնութեամբ 2006-ին իբրեւ առաջնորդի օգնական առաքուած է Բերիոյ հայոց թեմ, իսկ 2017-ին՝ վերադարձած Անթիլիասի Մայրավանք:

«ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՅ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ»

Լուրեր Հայաստանի

ՅԱԿՈԲ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒԲԵԱՆ. «ԴԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ ՈՒԾԵՂԷ ԻՐ ԱԶՄԱԿԻՑՆԵՐՈՎ»

Ամերիկահայ բարերար, Հայ Յեղափոխական Դաշնակցության աջակից դոկտ. Մայք Սարեան Պրիւսելի մէջ Հայ Դատի յանձնախումբին համար գրասենեակ գնելու նպատակով տուած է 300 հազար ամերիկեան տոլար նուիրելու խոստում:

«Դոկտ. Մայք Սարեան Քալիֆորնիոյ գաղութի այն բարերարներէն է, որ իր լուսման կը բերէ մեր ազգի իրաւունքներու պաշտպանութեան: Հայոց Յեղասպանութեան հետապնդման ճամբուն վրայ՝ Հայ Դատին կատարած Մայք Սարեանի այս ներդրումը իր դրական անդրադարձը պիտի ունենայ



մեր պահանջատիրական աշխատանքներուն մէջ», հաստատեց ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Տարոն Տեր Խաչատուրեան:

Մայք Սարեան նաեւ տեսաուղերձով յաջողութիւն մաղթած էր 28 Փետրուարին Հայաստանի մէջ սկսած Հայ Յեղափոխական Դաշնակցության 34-րդ Ընդհանուր ժողովի աշխատանքներուն: Անդրադառնալով հայութեան առջեւ ծառայած դժուարութիւններուն, մասնաւորապէս արցախեան 44-օրեայ պատերազմի պատճառով ունեցած մեծ կորուստներուն՝ ամերիկահայ բարերարը յոյս յայտնած է, որ միասնական աշխատանքով կարելի պիտի ըլլայ կերտել աւելի լաւ ապագայ՝ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մէջ: Այս առաքելութեան մէջ ան առանձնապատու կերպով կարեւոր նկատած է Դաշնակցության դերը, որ յառաջիկայ երկու շաբաթներուն ընթացքին պէտք է Ընդհանուր ժողովին բիւրեղացնէ իր որոշումներն ու ընելիքները:

«Դաշնակցութիւնը ուժեղ է իր աջակիցներով, որոնք տարբեր միջոցներով կը նպաստեն մեր համազգային ընդգրկում ունեցող աշխատանքներուն: Հայ Դատի հետապնդման ջանքերը, մասնաւորապէս, մշտապէս կարիք ունին ուշադրութեան եւ ներդրումներու, կամաւոր եւ մասնագիտական ներուժի ներգրուման: Այս նուիրական գործունէութեան իրենց նպաստը կը բերեն բազմաթիւ բարերարներ, մասնագէտներ, երիտասարդներ: Դոկտ. Մայք Սարեանի նուիրատուութեան այս նախաձեռնութիւնը, անշուշտ, էական պիտի նպաստէ Եւրոպայի Հայ Դատի յանձնախումբի աշխատանքներուն եւ պիտի ըլլայ դրական նոր ազդակ՝ նմանատիպ աջակցութիւններու համար: Ընդհանրապէս մեր համազգային դատի հետապնդման աշխատանքներուն աջակցելու, ինչպէս նաեւ Դաշնակցության 34-րդ Ընդհանուր ժողովի աշխատանքներուն յաջողութիւն մաղթելու համար», յայտնեց ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատուրեան:

ՃԱՒԱԿՅԱԿԱՆ



Խոր ցաւով տեղեկացանք ընկ. Գրիգոր Աչըքեանի վաղաժամ մահուան մասին:

Ընկեր Գրիգորը (Գօգօ) եղել է Բիւրոյի Երիտասարդական գրասենեակի առաջին պատասխանատուներից եւ Մամլոյ դիւանի առաջին աշխատողներից մէկը:

Հաւատաւոր եւ նուիրեալ կուսակցական ընկեր, որը վարել է կուսակցական բազմաթիւ պատասխանատու պաշտօններ:

Մեր խորին ցաւակցութիւնն ենք յայտնում ընկեր Գրիգոր Աչըքեանի ընտանիքին, հարազատներին, ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի ԿԿ-ին եւ շարքերին:

ՀՀԴ ԲԻՐՕ 2 Մարտ 2022

ԷԼԻԶԱՊԵՏ ԶՈՒՂՃԵԱՆ. «ՈՉ ՄԷԿ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԿՐՆԱՅ ԽԵԼ ԱՅՍ ԵՒ ԱՊԱԳԱՅ ՍԵՐՈՒՆԴԻ ԻՐԱՌԻՆՔԸ»

Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի մամուլի քարտուղար Էլիզապէթ Զուլճեան Հայ Յեղափոխական Դաշնակցության 34-րդ Ընդհանուր ժողովի բացման պաշտօնական արարողութեան ընթացքին լրագրողներու հետ զրոյցին ըսաւ, որ վերջին տարիներուն մօտաւորապէս 120 միլիոն տոլար ամերիկեան կառավարութենէն ուղարկուած է Ատրպէյճանին, հակառակ անոր, որ Ատրպէյճան եղած է յարձակողական ուժը ամեն քայլափոխի Հայաստանի եւ Արցախի դէմ:



Ան յայտնեց, որ ասիկա կը տեսնենք առօրեայ մակարդակով ոչ միայն Արցախի, այլ նաեւ Հայաստանի ինքնիշխան հողին վրայ, ուր դեռ 1000-է աւելի ատրպէյճանական զօրք կայ:

«Ուրեմն ամերիկեան կառավարութիւնը պէտք է յստակ ազդանշան ուղարկէ Ատրպէյճանի կառավարութեան, յայտնելով որ չի կրնար ամերիկեան օժանդակութեամբ կանաչ լոյս տալ Ատրպէյճանի կառավարութեան, որ շարունակէ իր յարձակողական քայլերը», ըսաւ Զուլճեան:

Ան յիշեցուց Սումկայիթի, Պաքուի, Կիրովապատի, Մարաղայի ջարդերը եւ ըսաւ, որ ատեն 34 տարուան ընթացքին շարունակուած են եւ միջազգային մակարդակով Ատրպէյճանին ազդանշան տուած են, որ կրնայ շարունակել իր քայլերը:

ԼԵՌՆԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՆԵԱՆԱԿՈՒՄԸ ԿԳՄ ՓՈԽՆԱԽԱՐԱՐ



Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Յարութիւնեան հաստատած է կառավարութեան որոշում մը, որուն համաձայն՝ Լեւոնիկ Յովհաննիսեան նշանակուած է կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարզանքի նախարարի տեղակալ:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԵՒ «ՊԱՏԻՒ ՈՒՆԵՄ» ԽՄԲԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԻՏԻ ԶՄԱՆԱԿՅԻՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ


ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» եւ «Պատիւ Ունեմ» խմբակցութիւնները, ինչպէս նախապէս յայտնած էին, 2 Մարտի նիստին դեմ դրին նախագահի ընտրութեան հարցով քննարկումին: Ընդդիմադիր պատգամաւորները լքեցին նիստի դահլիճը՝ տեղի ունեցածին հանդէպ արտայայտելով իրենց վերաբերմունքը:

«Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութիւնը այս պաշտօնով առաջադրած է բարձր ճարտարագիտական արդիւնաբերութեան նախարար, Երեւանի նախկին քաղաքապետ Վահագն Խաչատրեանի թեկնածուութիւնը: Ան միակ թեկնածուն է:



Ըստ Սահմանադրութեան, եթէ Հանրապետութեան նախագահ չ'ընտրուիր, տասնօրեայ ժամկէտով կը կատարուին նախագահի նոր ընտրութիւն՝ նոյն փուլերով: Երկրորդ փուլով արդէն ընտրուած կը համարուի ձայներու երեք հինգերորդը ստացած թեկնածուն: Երրորդ փուլին արդէն կրնայ մասնակցիլ երկրորդ փուլին աւելի ձայներ ստացած թեկնածուն: Երրորդ փուլով Հանրապետութեան նախագահ կ'ընտրուի այն թեկնածուն, որ կը ստանայ պատգամաւորներու ընդհանուր թիւի ձայներու կեսէն աւելին:

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ



Մարուշ Երամեան

Պատերազմը անմարդկային, անբարոյական արարք է: Ո՛չ, պատերազմ սկսվել է անմարդկային եւ անբարոյական, ո՛վ որ ալ ըլլայ սկսողը, ի՛նչ պատճառներով ալ սկսած ըլլայ պատերազմը, որովհետեւ սպասելի է, որ մարդկութեան զարգացումի ա՛յս հանգրուանին, մարդիկ, մասնաւոր երկիրներու ղեկավարներ, որոնք ինձմէ-քեզմէ աւելի խելացի են, կարենան երկխօսութեամբ հարցերը լուծել: այլապէս, երբ երկիր մը յարձակումի ենթարկուի, անշո՛ւշտ որ պիտի պաշտպանէ ինքզինքը եւ ... պատերազմը կը դառնայ անխուսափելի:

Այսքանը թերեւս քանի մը դար առաջ էր, երբ երեւոյթները շատ աւելի պարզ էին, քան հիմա: Հիմա ամեն բան այնքան բարդացեր է, որ մենք, ժողովուրդ կոչուածս ա՛լ բան չենք հասկնար:

Կար ժամանակ, երբ պատերազմը իբր թէ ժողովուրդին խաղաղ կեանք մը ապահովելու համար էր. արդէն առածի կարգ անցեր է՝ «հաղաղ կեանքի համար պետք է պատերազմիլ»-ը:

Որքան ալ ժողովուրդին համար ըլլար սակայն, նոյն այդ ժողովուրդին էր, միայն այդ ժողովուրդին էր, որ կը գոհուէր:

Այսօր ամեն բան փոխուեւ է, բարդացեր է աւելի. միայն մէկ բան մնացեր է անփոփոխ եւ կը կրկնուի նոյնութեամբ՝ ժողովուրդին գոհուիլը:



Կարծես չեն բաւեր գործարաններէն դուրս խուժող կազերուն հետեւանք կլինայական փոփոխութիւնները, որոնք ցունամիներու եւ հեղեղներու պատճառ կը դառնան եւ անթիւ-անհամար գոհեր կը խլեն, երկրաշարժներն ու հրաբուխները, որոնք քանի մը վայրկեանի մէջ երկար դարեր կանգուն մնացած կառոյցներ եւ քաղաքներ հիմնայատակ կը քանդեն, կարծես բաւարար չըլլային համավարակներն ու համաճարակները, մարդ արարածը պետք է նաեւ տոկայ ու դիմանայ պատերազմներուն, որոնք անհասկնալի շահեր կը պաշտպանեն եւ անմատչելի հաշիւներով կը գործեն:

Վերջերս մեջտեղ նետուած էր վարկած մը, որ կ'ըսեր թէ աշխարհի վրայ ապրող մարդոց թիւը այնքան բարձրացած է, որ միայն բնական աղէտներով մահերը բաւարար չեն, պետք է նաեւ համաճարակներ եւ պատերազմներ ստեղծել, որ երկրագունդը... չպայթի:

Երկար-երկար կը մտածեմ եւ կարճ խելքովս կը հասնիմ այն եզրակացութեան, որ թէ պատերազմներուն եւ անոնց ընթացքին օգտագործող գիտնաբերքին տրուած հսկայ նիւթականը տրամադրուեր կարելի լուծումներ գտնելու համար բազմացող մարդոց չբաւելիք ցորենին, ուտեստին եւ ջուրին, շատ հաւանաբար կարելի ըլլար խուսափիլ պատերազմներէն եւ աշխարհը դարձնել ապրելու համար իրապէ՛ս աւելի հաճելի եւ աւելի հանգիստ վայր մը:

Ունինք փոքրաթիւ բայց յստակ օրինակներ, երբ անապատին մէջտեղ բուսած երկիր մը կրցած է ոչ միայն ապրելի դարձնել անապատը, այլ հմայիչ կերպով ընծայել զայն թէ՛ հոն աշխատողներուն, թէ՛ զբօսաշրջիկներուն:

Ընթերցողը հիմա պիտի մտածե՛ք բայց որքա՛ն միամիտ ես: Թերեւս միամիտ եմ, սակայն լաւ գիտեմ, որ այս բոլորը կը կատարուին ոչ թէ երկրի մը ապահովութեան եւ բարօրութեան համար, բայց «ես»-ին համար, որուն տիրապետութիւնը իրապէ՛ս անհակակշմելի է, երբ տիրէ մարդ արարածի հոգիին:

Քաղաքագետները, տուեալ պահուն իշխողները եւ նման պաշտօններ ունեցող մարդիկ (յաճախ փոքր, բայց միջավայրին մէջ մեծ թուացող պաշտօններ ունեցողները նաեւ) իրապէ՛ս կարճ յիշողութիւն ունին, որովհետեւ բոլորն ալ հակամետ են մոռնալու կեանքին գերագոյն ու թերեւս միակ ճշմարտութիւնը՝ մահը, որ ո՛չ մէկ հակակշռի կարելի է ենթարկել. կը մոռնան եւ այնպիսի կիրքով կը լծուին պատերազմներ հրահրելու, որ կարելի է միայն գարմանալ:

Բայց կեանքը ճատրակի խաղ մըն է, ուր ուղեղը աշխատցնողը կը շահի, անկախ անկէ թէ իր խաղը մարդկային է, թէ ոչ:

Եւ այսպէս, կամաց-կամաց կը վերածուիք բանի մը, որ շա՛տ հեռու է «Եւ Աստուած ստեղծեց մարդը իր պատկերին համաճայն»-էն, մեծերը իրենց խաղալու կիրքին, փոքրերը՝ իրենց տառապանքին սաստկութեան տակ:

Այստեղ կրնայի մէջբերել նաեւ «Բնութիւն»-էն հատուածներ, բայց

Մահախօսական

ԲԺ. ՎԱՅԷ ՍԻՍԵՌԵԱՆ



Յակոբ Միքայէլեան

Ափսոս որ իմ ամենամեծ քրոջս անդրանիկ որդին՝ Վահէն մահացաւ: Հալչեալ, եւ ես Երեւան գտնուելով, չկրցայ իր հոգեհանգստեան եւ թաղումին մասնակցիլ եւ որպէս իր հարազատ մօրեղբայրը՝ ափ մը հող նետել իր գերեզմանին ու դամբանական երկու խօսք ըսել:

Վահէն եւ ես տարեկիցներ ենք եւ եղբոր նման մեծցեր ենք, նոյնիսկ մեր դէմքի նմանութիւնները երբեմն պատճառ դարձած են, որ մարդիկ շփոթեն մեզ: Պայմանները այնպէս մը դասաւորեցին, որ ընտանեօք փոխադրուին Քամիշլի եւ մենք երկար տարիներ իրարմէ հեռու մնացինք, մինչեւ որ Պաքստիկոնի տարին վերստին միացանք, երբ ինք եկաւ Հալչեալ եւ դարձաւ ԱԶԵ Ճեմարանի աշակերտ: Իր նման աշխատասեր աշակերտ քիչ կը գտնուէր: Փոքր տարիքէն ցոյց տուած էր իր իւրայատուկ նկարագիրը, յատկապէս կարգապահական եւ նպատակասլաց իր աշխատասիրութեամբ:

Չրջան մը աշխատեցաւ Պերուքի հոգեբուժարանին մէջ, իբրեւ օգնական անուակի հոգեբոյժ Տըքթ. Մանուկեանին: Այնտեղ ալ բաւական հարուստ գիտաբժշկական փորձառութիւններ կուտակելով, վերադարձաւ Սուրիա եւ վերջնականապէս հաստատուեցաւ Հալչեալ, ուր բացաւ իր առաջին դարմանատունը եւ առաջին իսկ օրէն շահեցաւ բո-



լորին համակրանքն ու յարգանքը: Բազմազբաղուածութիւնը պատճառ չէր, որ չմասնակցի ազգային-հասարակական գործունեութեան: Եղաւ Ազգ. Իշխանութեան զանազան մարմիններուն մէջ, դարձաւ շքանշանակիր, եղաւ Ճեմարանի խնամակալութեան ատենապետ եւ տարիներով ծառայեց:

Հետաքրքրական գաղափարներ ուներ, որպէս պրպտող միտք, մտածող էր, իսկական մտաւորական: Իր մասնագիտութեան գուգահեռ կը սիրեր գրականութիւնը, շատ ընթերցասէր էր, գրական փորձեր կատարեց, հայերէն, թէ՛ արաբերէն, եւ տեղացի բժիշկ-գրագետի մը հետ հեղինակեց սուրիական քանի մը բազմաօղակ ֆիլմերու նիւթեր:

Մէկ խօսքով, բովանդակալից կեանք մը ունեցաւ եւ անժամանակօրէն անողոք ախտի մը գոհ գնաց: Լսեցի, որ ազգային թաղումի արժանացած է, իսկապէս արժանի էր: Ընտրակալութիւն Սրբազան հօր եւ Ազգային իշխանութեան: Երկրային Հանգիստ իր հոգուն: Յիշատակն արդարոյն եղիցի օրինութեամբ:

ՀՈԳԵՉԱՆԳԻՍ
Ժամկոչեան եւ Ազարիկեան ընտանիքները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

**ԾԱՐՏԱՐԱՊԵՏ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ
ՀԱՆԳՈՒՅԵԱԼ
ՅԱԿՈՔ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ**

մահուան սուգին:
Հանգուցեայի բառատուկի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 6 Մարտ 2022-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Վիլլաներ-Հալչեալ: Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցոյ ներքնասրահէն ներս:



ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- 

ԽՈՅ
Ձեր մասնագիտության համապատասխան գործ մը պիտի առաջարկուի ձեզի այս շաբաթ, որ գոհ պիտի պահե ձեզ:
- 

ՑՈՒ
Սիրային ձեր յարաբերություններուն բարելաւում պիտի արձանագրուի այս շաբաթ: Արժեւորեցէ՛ք անկեղծ սերը:
- 

ԵՐԿՈՒՐԵԱԿ
Մարդոց ձեր յաջողություններուն մասին անընդհատ մի՛ պատմէք: Կրնաք անոնց նախանձը գրգռել:
- 

ԽԵՑՁԵՏԻՆ
Եթէ ձեր նոր ծրագիրներուն նպատակը խաղող ուտելն է, ոչ թէ պարտիզ պանը ծեծելը՝ խնդրայարոյց անձեր աշխատանքի մասնակցութեան մի՛ հրաւիրէք:
- 

ԱՌԻՇ
Մարդոցմէ ձեր հիասթափությունը ձեզ պիտի մղէ նոր ու որակաւոր ընկերային շրջանակ կազմելու: Խոհեմ եւ բակիմաց մարդոց հետ պիտի ընկերանաք:
- 

ԿՈՅՍ
Շահախնդիր բարեկամը գատորոշեցէ՛ք անկեղծեւ եւ ըստայնմ ընտրեցէ՛ք ձեր բարեկամները: Ձեր յաջողութեան օրերուն ձեզի քծնողներուն բնաւ մի՛ վստահիք:
- 

ԿՇԻՈՔ
Դուք ձեզ մի՛ ծանրաբեռնէք յաւելելալ աշխատանքներով: Ժամանակ յատկացուցէ՛ք ընթերցումի, ընկերային կեանքի եւ արուեստի:
- 

ԿԱՐԻՃ
Տնտեսական ծանր պայմաններու մէջ էք: Մի՛ յուսահատիք, աշխատանքի նոր եւ անկանխատեսելի առիթներ պիտի բարելաւեն ձեր վիճակը:
- 

ԱՂԵՂԱՍՈՐ
Ձեր ներաշխարհը հարուստ է, որովհետեւ անընդհատ կը գարգացնէք ձեր գիտելիքներն ու նոր լեզուներ սորվելու ունակութիւնը: Այս մէկը ձեր կեանքը դուրս կը բերէ միօրինակութենէ:
- 

ԱՅՅԵՂՁԻՐ
Աշխատատեք էք ու սիրուած: Այդուամենայնիւ դիակալ մի՛ ըլլաք ձեզի նեղացնողներուն հանդէպ, միշտ յիշեցէ՛ք, որ անոնք անգործութենէ կը տառապին:
- 

ՋՐՈՍ
Վստահելի գործակից էք: Այս իսկ պատճառով աշխատանքի մէջ պիտի արժանանաք նոր պաշտօնի ու լաւապէս պիտի վարձատրուիք:
- 

ՁՈՒԿ
Աշխատանքի մէջ միջակությունը չէք սիրեր: Բծախնդիր էք ու միայն որակը գնահատող: Թէեւ պիտի յոգնիք, սակայն կայուն դիրքի պիտի հասնիք ձեր աշխատանքին ու ընկերային կեանքին մէջ:



Սեան Ագաղիկեան-Պարմաքզեան

ՔԱՐԱՅՈՒՆՁ

Հայաստանի տարածքին ամբողջ տարածքին վրայ կը գտնուին նախադարեան յուշարձաններ, վանքեր, սակայն ամենախորհրդաւոր, պատմաբաններու եւ գիտնականներու հետաքրքրութիւնը գրաւող կառուցը Քարահունջն է: Այժմ պատմամշակութային արգելոց եւ պետութեան կողմէ պահպանուող



տարածք է: Յայտնի է Քարենիշ կամ Չօրաց քարեր անուններով, պրոնզ-երկաթի դարաշրջանի հսկայ եւ ինքնատիպ մեգալիթեան կառուցներով (դամբարաններ): Հնավայրը անուանուած է «Չօրաց քարեր», որ կը նշանակէ քարէ գօրք: Ժողովրդական ավանդութիւն համաձայն, քարերը քարացած գիւտերն են: Քարահունջ բառն ալ ունի հետաքրքրական ստուգաբանութիւն. ան կը նշանակէ «քարերու փունջ» կամ հնչող՝ խօսող քարեր: Կայ ուրիշ կարծիք մըն ալ, որ Քարահունջ անուանումը տրուած է անգլիական Սթոունհենձ հնավայրի նմանութեան պատճառով: Յայտնի են նաեւ այլ անուանումները՝ Տից քարեր, Դիք-Դիք քարեր:



Հնագիտական պեղումներու համաձայն, ինչպէս, որ աշխարհի այլ միգալիթեան կառուցները, Քարահունջի յուշարձանը եղած է կրօնական պաշտամունքային կառուց, դամբարան եւ բնակավայր: Սակայն 1980-ական թուականներէն սկսեալ կ'ուսումնասիրուին անոր աստղագիտական դերն ու նշանակութիւնը: 2004-ին նախապատմական հնագիտական այս կառուցը Հայաստանի Հանրապետութեան կողմէ կը ճակջցուի իբրեւ «Քարահունջ աստղադիտարան»: Կը գտնուի Հայաստանի Սիւնիքի մարզի Սիսիան քաղաքին մօտ:

Շինութեան համար մեր նախնիները մօտակայ Դարբ գետի՝ Որոտանի վտակի ձորի քարահանքէն հաւաքած են 222 քարեր: Անոնք պագալթեն, որոնց բարձրութիւնը կը տարուբերի կէս մէթրէն մինչեւ 3 մէթրի միջեւ, իսկ ծանրութիւնը՝ մին-

չէ 10 թոն: Անոնցմէ 84 հատին վրայ կը գտնուին 4-5 սմ. ձուածեւ անցքեր, որոնք եզակի երեւոյթ կը կազմեն հնագոյն յուշարձաններուն մէջ: Այդ անցքերը կ'ապահովեն դէպի նպատակետը բարձր ճշգրտութիւն եւ կայունութիւն: Կ'արժէ մտածել, թէ որքան ժամանակ եւ ոյժ պէտք էր այդ 50 թոն եւ անելի ծանրութիւն ունեցող քարերը քանի մը քիւլմէթր կրելու համար:

Քարահունջը բաղկացած է խումբ մը կառուցներէ եւ ամանձին քարերէ, որոնք միասին կը կազմեն համալիրը: Այդ կառուցներն են՝ կեղրոնական շրջանը, հիւսիսային եւ հարաւային թեւերը, հիւսիս-արեւելեան քարուղին, շրջանը հատող լարագիծը, ինչպէս նաեւ ամանձին կանգնած քարերը: Հակառակ անոր, որ հողային մաշումներու ենթարկուելուն պատճառով քարերը ծածկուած են քարամամուռներով, սակայն մեծ մասը պահպանուած է:



Փոքր անցքերով այս քարերը գարմանալիօրէն կը հանդիսանան ճշգրիտ աստղադիտակներ: Այսպէս, որոշ անցքեր ուղղուած են հորիզոնին ու կը նային արեւածագի եւ արեւմուտի կետերուն ուղղութեամբ: Ուրիշ անցքեր կը նային դէպի վեր՝ երկնքի տարբեր կետերու:

Քարահունջի տարիքին մասին յաճախ իրար հակասող եւ ընդդիմացող տեսակետներ կան: Յուշարձանի տարիքի մասին մանրամասն ուսումնասիրություններ կատարած է հայ գիտնական ակադեմիկոս Պարիս Յերունին: Ան «Հայերը եւ Հնագոյն Հայաստանը» գիրքին մէջ ներկայացուցած է իր կատարած աստղագիտական, ֆիզիքական եւ թուաբանական հաշուարկները, որոնց հիման վրայ Քարահունջը կառուցուած է 7500 տարի առաջ:

Չուիցերիացի գիտնական, գիտություններու դոկտ. Էլէյնը 1995-ին ուսումնասիրած է Քարահունջի տարածքը: Ան ուշադրութիւն դարձուցած է թիւ 68 քարին, որուն փորուած խորշին մէջ անձրեւաշուր լեցուած էր: Չուրի մակերեսէն արտացոլուած արեւու ճառագայթը թիւ 69 քարին գագաթին հետ կը կազմէ որոշակի անկիւն մը: Էլէյնը կարծիք յայտնած է, որ ամանձին կանգնած թիւ 200 քարը խաղցած է նոյն դերը, ինչ որ Անգլիոյ «Սթոունհենձ» ի յայտնի կրկնաքարը: Ան յայտնաբերած է շարք մը գործիքներ, որոնք ամենայն հավանականութեամբ ամուչուած են աստղագիտութեան հետ:

2003-ին ռուս փրոֆեսոր Փոքրաբեով ուսումնասիրություններէ ետք այն եզրակացութեան կու գայ, որ Քարահունջը աշխարհի ամենահին աստղադիտարանն է:

2016 -ին «National Geographic» ամսագիրը գայն ներառեց աշխարհի հնագոյն աստղադիտարաններու ցանկին մէջ:



Ռաֆֆի Սիկանյան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՑ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Պասքեթի համաշխարհային մրցաշարի գտման փուլի մրցումներում, Սուրիոյ Պասքեթի տղոց հաւաքականը 68-80 արդիւնքով Իրանի մէջ պարտուեցաւ հիւրընկալ կազմէն:



- Սուրիոյ պասքեթի Բ. դասակարգի տղոց մրցումներում, ՅԵԸ-ի տղաքը, շարունակելով իրենց փայլուն արդիւնքները, Դամասկոսի մէջ 67/70 արդիւնքով պարտութեան մատնեցին ալ Նասըրին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՈԱՖԱՅԷԼ ՆԱՏԱԼ ՄԵՔՍԻԵԱՅԻ ԲԱՅ ՄՐՑԱՇԱՐԻ ԱԿՈՅԵԱՆ ԶՆԱԴԻՍԱՅԱԲ

Համաշխարհային թենիսի արիստավարժ խաղացողներու աղիւսակին 5-րդ դիրքը գրաւող Ռաֆայէլ Նատալ Կիրակի, 27 Փետրուարին տիրացաւ Մեքսիքայի մէջ տեղի ունեցած բաց մրցաշարի ախոյեանութեան՝ աւարտական մրցումին պարտութեան մատնելով անգլիացի Քամիլոն Նուրիին:



Հանդիպումը ընթացաւ մէկ ժամ 54 վայրկեան տևողութեամբ եւ աւարտեցաւ 4-6/4-6 արդիւնքով՝ ի նպաստ Նատալի:

Աւելցնենք, որ Նատալի մարզական կեանքին մէջ այս եղաւ ախոյեանութեան 91-րդ տիտղոսը: Վերջերս ան տիրացաւ Աւստրալիոյ բաց մրցաշարի ախոյեանութեան տիտղոսին:

ՌՈՍԱՆ ԻՊՐԱՄՈՎԻԻ ԻՐ ԲՐԱԺԱՐԱՎԱԿԱՆ ԵՆՐԿԱՅԱՑՈՒՑ

Անգլիոյ Չելսի ակումբի սեփականատեր Ռոման Իպրամովիչը ներկայացուց իր հրաժարականը եւ գործը վստահեցաւ Չելսիի բարեսիրական հաստատութեան: Իպրամովիչը դիմատետրի իր էջին վրայ գրեց. «Այսօրու ընէ գործս կը յանձնեմ Չելսիի բարեսիրական հաստատութեան անդամներուն եւ վստահ եմ, որ անոնք կրնան շարունակել ինչ որ սկսած էինք: Նախագահութեանս քսան տարիներուն ընթացքին միշտ փորձեցի ակումբը պահել լաւագոյն դիրքերու վրայ: Կարծեմ յաջողեցայ առաքելութեանս մէջ»:



Աւելցնենք, որ ռուս մեծահարուստը Չելսիին հետ արժանացած է գաւազան տիտղոսներու:

ԼԻԿԵՐՓՈՒԼ ՆՈՒԱՃԵՑ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼԻԿԱՅԻ ԳԱՄԱԹԸ

Կիրակի, 27 Փետրուարի երեկոյեան Լիվերփուլ նուաճեց անգլիական լիկայի գաւազան՝ աւարտական մրցումին պարտութեան մատնելով Չելսին: Լոնտոնի «Ուեմպլի» մարզադաշտին վրայ տեղի ունեցած հանդիպումին հիմնական ժամանակաշրջանը աւարտեցաւ 0-0 հաւասար արդիւնքով: 11 մեթրի հարուածներուն Լիվերփուլի խաղացողները կրցան ներկայանալ աւելի յաջող եւ նշանակել 11 հարուած, իսկ մրցակիցը բաւարարուեցաւ միայն 10 կոլով: Աւելցնենք, որ ասիկա 9-րդ անգամն է, որ Լիվերփուլ կը տիրանայ սոյն բաժակին:



ԽԱԶԲԱՌ (ՄԻ 380)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբոջեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2									■			
3		■	■	■				■	■			
4				■						■		
5									■	■		
6			■	■	■			■	■			
7						■		■	■			
8					■						■	
9												■
10	■							■				
11		■								■		
12												■

Չորիզոնական

- ՀԱԸՄ-ի քայլերգը:
- Ածականի տեսակ: Հակառակ՝ քաջ:
- Հակառակ՝ անձնական դերանուն: Անգոր:
- Մագ: Ժողով: Ճափոնական թատրոն:
- Մոլորակ մը:
- 403: Հակառակ՝ 37: Ամենէն առաջ:
- Անվերջատառ՝ մեծ մայր: Հակառակ՝ տառի մը անունը:
- Չեփիւռ: Արական անուն: Հակառակ՝ յարաբերական դերանուն:
- Անձուկ, Նեղ:
- Հակառակ՝ անձնական դերանուն: Հակառակ՝ աղբիւր: Սրատես:
- Պատկեր: Կրկնուած ձայնաւորներ: Կրկնուած ձայնաւորներ:
- Մեծ Պահիքի կետը: Տնտեսական տագնապ մը:

Ուղղահայեաց

- Սիրոյ առաքեալը: Տարի:
- Տարածքի միաւոր: Երգերու գիրք:
- Տառի մը անունը: Հակառակ՝ յարաբերական դերանուն: Ընկրկում:
- Աչք: Հակառակ՝ տառի մը դրացիները: Հակառակ՝ փոքրացնող մասնիկ:
- Աշխատատեղ: Թաքուն պայթուցիկ:
- Նշմարել: Ճար, միջոց:
- Կրկնուած ձայնաւորներ: Երկբարբառ: Արական անուն:
- Հակառակ՝ 470: Սիւսանաթոյի ծննդավայրը: Աւաղ:
- 4400: Անգոր, Անճարակ:
- Նոխազի կարուած կաշի: Յաւի ճիչ: Հակառակ՝ աղբիւր:
- Վերջածանց: Եական բայ: Մարմար:
- Վիզէն Գլակի ծածկանունը:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 379)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
2	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
3	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
4	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
5	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
6	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
7	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
8	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
9	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
10	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
11	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
12	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■

ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի 7/3 6° 14°	Երեքշաբթի 8/3 5° 15°	Չորեքշաբթի 9/3 5° 15°	Հինգշաբթի 10/3 6° 15°	Ուրբաթ 11/3 5° 16°	Շաբաթ 12/3 6° 15°	Կիրակի 13/3 7° 16°
---	--	---	---	--	---	--

ՀԱՅ ԵՐԵՔ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏՆԵՐՈՒՆ ՆԱԽԱԳԱՆՈՒԹԵԱՄԲ ՅԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՒ ՍՐԲՈՅ ՎԱՐՊԱՆԱՆՅ ՏՕՆԸ

Հինգշաբթի, 24 Փետրուար 2022-ին, երեկոյեան ժամը 5:00-ին, Նախագահութեամբ հայ երեք հա-



մայնքապետներուն եւ հիւրընկալութեամբ՝ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ.

Հայրենեաց Պսակադիր» երգը: «Արիացեալք» շարականը մեներգեց Բիւզանդ. Պէպէճեանը, իսկ Մակար Եկմալեանի «Լռեց» երգը մեներգեց բարշ. Կարօ սրկ. Պալեանը, դպրաց դասին մասնակցութեամբ:

Վահան Թեքեանի «Խորհուրդ Վարդանանց» բանաստեղծութիւնը ասմունքեց դպրուհի Աննա Սաղապազարեանը:

Օրուան բանախօսութիւնը ներկայացուց բարշ. Կարօ սրկ. Պալեանը: Ան խօսքին սկիզբը որդիական շնորհակալութիւն



Եպս. Չօպուեանի, տեղի ունեցաւ Սրբ. Վարդանանց տօնակատարութիւն, Հայ Առաքելական Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս: Առաջնորդ Սրբազան Հօր կողքին, տօնակատարութեան իրենց մասնակցութիւնը բերին Բերիոյ Թեմի Կաթողիկէ Հայոց Առաջնորդ Արիի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեանի ներկայացուցիչ Արժ. Տ. Կոմիտաս քինյ. Տատաղլեան եւ Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի Համայնքապետ Վերապատուելի Դոկտ. Յարութիւն Սելիմեան:

յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր՝ բանախօսութեան այս առիթը շնորհելուն համար:

Ան անդրադարձաւ Սրբ. Վարդանանց տօնի խորհուրդին, յայտնելով, որ «Վարդանանց պատե-



րագ մի միակ կտակը այն է, որ երեւելի եւ աներեւոյթ Յազկերտներուն դիմաց Վարդանի սուրը բարձր պահենք՝ պաշտպանելու մեր եկեղեցին ու Աւետարանը, որովհետեւ մեր Նախահայրերը ըսին. «Մեր Հայրը կը ճանչնանք Աւետարանը, իսկ մեր հոգեւոր Մայրը՝ Առաքելական Ս. Եկեղեցին»: Հաւատքը հազուստ մը չէ, որ կարենանք փոխել, այլ՝ քրիստոնէական մեր հաւատքը մեր մորթին գոյնն է»:

Երեք համայնքապետները իրենց պատգամը ուղղեցին հաւատացեալներուն:

Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի Համայնքապետ Վերապատուելի Դոկտ. Յարութիւն Սելիմեան իր պատգամին մէջ յայտնեց, թէ ներկայիս կ'ապրինք ոչ սովորական օրերու մէջ, մեր հայրենիքին այսօրուան դրուածքը եւ Սփիւռքի հայութեան իրավիճակը, առաւել եւս ժողովուրդներու դիմագրաւած բազմապիսի դժուարութիւնները մեզ դեմ յանդիման կը դնեն կեանքի գոյութեան կարգաւորին հար-



կութեան միութիւններու ներկայացուցիչներ եւ մեծաթիւ հայորդիներ: Բացման խօսք արտասանեց եւ հանդիսավարութիւնը կատարեց Մարինա Պօղիկեանը: Հայրենասիրական բնոյթի գեղարուեստական կոկիկ յայտագիրով հանդէս եկաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ դպրաց դասը, ղեկավարութեամբ՝ դպրապետ բարշ. տղթթ. Սարգիս սրկ. Իսկէնեանի, երգեհոնի ընկերակցութեամբ՝ Յովիկ Օհանեանի: Յաջորդաբար հնչեց «Նորահրաշ» շարականը եւ «Թե

Շար. 12 9

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԵՆ ՆԵՐՍ ՅԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՒ ԲՈՒՆ ԲԱՐԵՅԵՆՊԱՆԻ ՏՕՆԸ ՀՈԳԵՀԱՆՔՍԵԱՆ ՊԱՇՏՈՆ՝ ՎԱԽՃԱՆԵԱԼ Տ. ՎԱՀԱՆ Ծ. ՎՐԴ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ ՀՈԳԻՅՆ

Տնօրինութեամբ՝ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի եւ Թեմի Կրօնական Ժողովին, Կիրակի, 27 Փետրուար 2022-ի առաւօ-



տուն, Բերիոյ Հայոց Թեմի բոլոր շրջաններէն ներս Սուրբ եւ Ամահ Պատարագով յիշատակուեցաւ Բուն Բարեկենդանը, որ Մեծ Պահոց առաջին Կիրակին է:

Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան հանդիսապետեց Հայկաթի Սրբ. Զառասկից Մանկանց Մայր եկեղեցւոյ Սուրբ եւ Ամահ Պատարագին եւ յաւուր պատշաճի քարոզեց, ներկայութեամբ՝ Ազգային Վարչութեան անդամներու եւ մեծաթիւ հաւատացեալներու:

Օրուան պատարագիչն էր՝ Առաջնորդի Օգնական Հոգշ. Տ. Մանուկ Արք. Պարիխանեան: Պատարագի հոգեպարար երգեցողութիւնը կատարեց եկեղեցւոյ դպրաց դասը, ղեկավարութեամբ՝ դպրապետ բարշ. Սարգիս սրկ. Սարգիսեանի: Սրբազան Հօր քարոզին բնա-

նանալու համար Զրիստոսին մեզի սորվեցուցած Տերունական Աղօթքի բառերով անհրաժեշտ է, որ ներքեց մեր նմանները, երբ յանցանք մը գործեն մեզի հանդէպ, որպէսզի մեր երկնաւոր Հայրն ալ մեզի ներքէ: «Ամէն անգամ, որ կը ներքեց մարդոց յանցանքները, Աստուած Իր ողորմութեամբ եւ գթութեամբ վերանորոգութեան եւ փրկութեան առիթ կու տայ մեզի», աւելցուց Սրբազան Հայրը:

Մասիս եպիսկոպոս դիտել տուաւ, որ Մեծ Պահոց շրջանը մեր հոգիի անապատին մէջ ամփոփուելու եւ ընտրութիւն կատարելու հրաւեր մըն է, հետեւելով կա՛մ Ազգային եւ Եւրոպայի մեղաւոր ճանապարհին, որուն վախճանը մահն է, կա՛մ Յիսուսի կեանքի եւ յարութեան ճանապարհին, որուն պատկուով յաւիտենական կեանքն է:

Սրբազան Հայրը եզրափակելով յայտնեց, թէ Բուն Բարեկենդանին օրը՝ Սուրբ Խորանի վարագոյրը կը փակեց եւ մեր սրտի վարագոյրը կը բանանք Աստուծոյ առջեւ, որպէսզի մեր հաւատքը զօրացնէ եւ մեր քայլերը ճիշդ ճամբուն մէջ հաստատէ:

Պատարագէն ետք, Սրբազան Հօր Նախագահութեամբ Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երեց Միաբան Հայր, Բերիոյ Հայոց Թեմի Նախկին Առաջնորդի Օգնական, Թեմի «Ծառայութեան» շքանշանակիր վախճանեալ Տ. Վահան Ծ. Վրդ. Պերպերեանի հոգւոյն:

Առաջնորդ Սրբազան Հայրը «Հոգւոցն Հանգուցելոց» աղօթքը արտասանելով հայցեց, որ վախճանեալ Հայր Սուրբին հոգին խա-



բանն էր՝ օրուան ավետարանական ընթերցուածը. «Եթէ մարդոց ներքէ իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի ներքէ ձեզի» (Մտ 6.14): Սրբազան Հայրը յայտնեց, թէ Սուրբ գրային այս համարով կը վերջիջեց Ազգային եւ Եւրոպայի Աստուծոյ ներկայութեան ապրած երանական բուն կեանքը դրախտին մէջ: Բուն Բարեկենդանի տօնը եւ Մեծ Պահոց քառասնօրեայ շրջանը հոգեւոր ճանապարհորդութեան ընդմէջէն մեզի կը յիշեցնեն, թէ մեր ապրած երկրաւոր կեանքէն անդին գոյութիւն ունի յաւիտենական կեանք, որուն արժա-

ղաղութեան մէջ պահէ եւ երկնքի արքայութեան արժանացնէ:

Յիշեց, որ վախճանեալ Տ. Վահան Ծ. Վրդ. Պերպերեանի հոգւոյն, Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Թեմի բոլոր եկեղեցիներէն ներս:

Վերջին օծման ու թաղման կարգը կատարուեցաւ Երեքշաբթի, 1 Մարտ 2022-ին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Սուրբ եւ Ամահ Պատարագի ընթացքին:

Յիշատակն արդարոյն օրինութեամբ եղիցի: